

**ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ ՄԱՐԶԻ  
ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ**

22.05.2014

Հարգելի շրջանավարտներ

Վերջին զանգն ու վերջին դասը ձեր կյանքում դառնում են մի նոր ճանապարհի սկիզբ՝ լի լուսավոր նպատակներով, անզիջում պայքարով, ուսումնաստենչության եւ աշխատասիրության ձգտումներով: Վստահ եմ, որ ձեր ստացած դաստիարակությունը եւ գիտելիքները դուք այսուհետ հաջողությամբ կներդնեք հանրային կյանքի ամենատարբեր ոլորտներում տեղ գրավելու, խաղաղ ու ստեղծագործ հայրենիք եւ երջանիկ ընտանիքներ վերակերտելու, ձեր երազանքներն ու բարի նպատակներն իրագործելու համար:

Լայնահուն ու կանաչ ճանապարհ եմ մաղթում ձեր այսօրվա ու վաղվա պայծառ երթին, ցանկանում ձեզ նորոնոր բարձունքների նվաճում, կյանքի երջանիկ ու հաճելի պահեր, անսպառ հաջողություններ՝ ի բարօրություն հայոց հայրենիքի եւ հայ ժողովրդի:

Լավագույն ցանկություններով՝

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյան